

հենաւք, ապա՝ Շիղիւք¹, ապա՝ Ճիղբք, ապա՝
[Խեղալք², ապա՝ Կասբք, ապա՝] Փոլիւք³:
88 եւ ապա Կաւկաս բաժանի յերկուք բազուկս,
մինն գնալի դէպ ուղիղս կոչս, յորում՝ Շրոլան⁴
եւ Խարոլան ազգ[ք]⁵ մինչեւ ցիտրովէմ, եւ միւս
բազուկն արձակէ նախ վտակ մի՝ զԱրմ գետ, որ
է⁶ դէպ ուղիղ ի հիւսիսի յԱթլիս⁷ գետ, եւ ապա
նոյն բազուկն գնալի զԵլիւք հիւսիսոյ⁸, յորում
բնակեալ են Թաւասպարք, Հէճմատակք⁹, Իժ-
մախք, Փասխք, Փուսխք, Փոլիւքանակք¹⁰, Բա-
գանք, ուստի առնու պարիսպն երկայն, որ կոչի
Ապզուտ Կաւատ, մինչեւ ցԱլլմինսն¹¹ մաւրս¹² եւ

ցծով: 89 Որոյլ ըստ հիւսիսոյ¹³ Մասքութան¹⁴
ազգն բնակեալ են ի Վարդանեալ¹⁵ դաշտին,
մինչեւ ցԿասբից ծովն, յոր բա[21բ]զուկն Կաւկա-
սալի հայի, յորմէ ածեալ է զպարիսպն Դարբան-
դալի (այսինքն՝ «Կապ եւ դունն»)՝ քաղաք պա-
հակին ձորայ, աշտարակ ահագին ի ներքս ի ծո-
վուն կացուցեալ. իսկ ի հիւսիսոյ նորա՝ թագա-
ւորութիւն Հոնաց, հուպ ի ծով. եւ ի մտից նորա
առ Կաւկասով՝ Վարաջան¹⁶ քաղաք նոցին Հոնաց,
եւ Չունգարս եւ Մսրնդո¹⁷: 90 եւ յարեւելից բնա-
կեն Սախրք ցԱթլի¹⁸ գետ, որ մեկնէ ընդ Սախա-
կան Սարմատք¹⁹ եւ ընդ Սկիւթիա աշխարհք, որ
են Ապախթարք²⁰, այսինքն՝ Թուրքաստանք. եւ
Խաբան՝ թագաւոր նոցա, եւ Խաթունն՝ զշխոյլ նո-
ցա, կին Խաբանալի [ի Բասլաց²¹ ազգէն]²²:

91 ²³Ի Դ. Աշխարհ Ասիոյ Կողմիս է, որ է
եզր, յելից կալով Պոնտոս ծովուն, առ երի Սար-
մատիոյ՝ [ի]²⁴ մտիցն Դաւակոն գետոյ մինչեւ
ցԿաւկաս լեռն եւ ցնորին բազուկ, որ բաժանէ
ընդ նա եւ ընդ Վիրս, եւ անտի սահմանի մասամբ
ինչ Մեծ Հայոց մինչեւ ցԿապադոկիական²⁵ Պոն-

- 1 V Շիւպք փխ Շիղաք (վեր. Սուրբեանի) ըստ համառոտի («Յօր. Շիւպք» ծանոթագրումով). տարբերակներ՝ Շիւպք եւ Շիղեալք. ի դէպ, համառոտումն մախորդ ցեղանունը կ-ով է՝ Խեմալք կամ Խեմուլք, որը, գուցէ եւ, սկզբնորինակիցն է, իսկ յաջորդի տարբերակները՝ Ծիւղալք եւ Ծիղաք (<*Ծիղալք), թերեւս, պարզ վրիպումներ են)
- 2 AEP Խեղալք փխ Խեղալք (վեր., հմմտ. մախորդ ծնթ. մէջ՝ Ծիղալք/Ծիւղալք փխ Ծիղալք/Ծիղբք եւ Շիղեալք փխ Շիղալք. յաջորդող երկու ապա-մները վերականգնել ենք՝ ըստ V-ի մախորդների)
- 3 VS Փիւք փխ Խեղալք, ապա ... Փոլիւք (վեր.՝ ըստ համառոտի, որտեղ ունենք «Խեղալք, Կասբք, Փոլիւք», ինչպէս եւ՝ V-ի մախորդող բնագրի. տե՛ս ապա ... [ապա], ինչպէս եւ բոլորագիր խ → ի. ըստ Երեմեանի վարկածի՝ Փիւք = [Լիւիւք])
- 4 VS Շրուան փխ Շրոլան (վեր., մոյմը՝ յաջորդ ա-մուան մէջ՝ Խարոլան. համառոտում՝ Շրուանք եւ Խարանք, որի համար հմմտ. բոլորագիրս u → ա)
- 5 VS ազգ փխ ազգ[ք] (վեր.՝ ըստ միւսների. տե՛ս, օր.՝ մախ. Բ.13, Գ.56)
- 6 Այս է օժանդակ բայի փոխարէն, թերեւս, կարելի է նաեւ վերականգնելի համարել այլ բայ, օր.՝ [մեկն]է, ինչպէս վերելում է, տե՛ս մախ. Ե.71, 90. գետանուն մասին հմմտ. մախ. Ե.85-ի ծնթ.
- 7 V յԱթս, S յԱթլ փխ յԱթլիս (վեր., հմմտ. վերե-ում, մախ. Ե.78, 80, 85)
- 8 VS հիւսիսոյ փխ հիւսիսոյ (վեր.՝ ըստ այլոց)
- 9 S Հէճմատակք փխ Հէճմատակք (V)
- 10 VS Փաքանակք փխ Փոլիւքանակք (վեր., գուցէ եւ՝ վերծանելի է՝ Փոլիւքանակք. համառոտի ձեւերն են՝ Փիքոնակք եւ Փոքոնակ, իսկ յաջորդող ցեղ-անունն տարբերակն է՝ Բաքանք)
- 11 S ցԱլլմինոն փխ ցԱլլմինսն (V)
- 12 V մուրս փխ մաւրս (վեր. Սուրբեանի, ով նաեւ բառի վրայ հարցական է դրել եւ տողատակում ծանոթագրել. «Յօր. ցԱլլմինսն մուրս». հմմտ. ուշ երկաթագիր ԱԻ → ՈԻ)

- 13 V հիւսիսոյ փխ հիւսիսոյ (վեր. Սուրբեանի)
- 14 Գրիչը երրորդ տառը գրել է զ, բայց վրան գիծ է քաշել եւ շարունակելս u-ով. համառոտի տարբերակներն էլ են՝ Մասքութք եւ Մաքքութք
- 15 V Վարդանէն փխ Վարդանեան (վեր. Սուրբ-նի)
- 16 Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է Վառաջան՝ ըստ համառոտի
- 17 Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է Սմընդո (ըստ արաբական աղբիւրների). համառոտը չունի
- 18 VS ցԹալի փխ ցԱթլի (վեր., հմմտ. մախորդի, մախ. Ե.88՝ յԱթլիս)
- 19 V յասիական տարմատք փխ Ասիական Սար-մատք (վեր. Սուրբեանի. տե՛ս բոլորագիրս u → ա)
- 20 Վերելում եւ ստորել անուանաձեւը Ապխատարք է (տե՛ս մախ. Բ.22. հմմտ. մախ. Ե.278)
- 21 AE Բասլաց փխ Բասլաց (DPv)
- 22 VS չիք ի Բասլաց ազգէն (վեր. Երեմեանի՝ ըստ համառոտի. լուսանցքում V-ի գրիչը փոքր կալ-ծակնածել մշանի տակ չ-ի մմանող տառ է գրել, որը, գուցէ եւ, կապ ունի այս պակասի հետ)
- 23 V ԻԱ., S ԺԹ. փխ ԻԴ. (վեր.՝ ըստ համառոտի. Ե-րեմեանն այստեղ վերականգնելի է համարում ենթավերնագիր «Յաղագս Կողքիս»)
- 24 V չիք ի (վեր. Սուրբեանի՝ ըստ մախորդների)
- 25 V ցԿապապատական, S ցԿապապական փխ Կա-պապադոկական (վեր.՝ ըստ այլոց՝ Ե.50, 52, 190)